

սրբոյ. եւ երդուեալ ամենայն բազմութիւն զաւրացն ազատաց եւ անազատաց, հանդերձ իշխանաւն Սիւնեաց Վասակաւ եւ ամենայն տանուտերամբն եւ սեպիաւք՝ հաստատեին զերդումն. եւ որոց մատանեաւ չէն եւս էր կնքեալ զԱւետարանն՝ կնքէին. եւ համբարձեալ առ հասարակ զծէռս ընդ երկինս՝ բարբառելով ասէին այսպէս ամենայն բազմութիւնն, այր եւ կին միաբան խնդալիցք.

«Զքեզ, սուրբ Յայր, արարիչ երկնի եւ երկրի, եւ զՈրդիդ քո միածին զտէր մեր Յիսուս Զրիստոս, եւ զսուրբ Յոգիդ¹ կենդանարար, զանորիչ եւ զանբակ Երրորդութեանդ միութիւն, խոստովանիմք արարիչ երկնի եւ երկրի, տեսակաց եւ անտեսից. որ միայնդ ես Աստուած, եւ չիք այլ ոք բաց ի քէն: 7 Որ եւ ըստ մարդասիրութեան յաղագս փրկութեան տիեզերաց՝ ի վախճան աւուրցս մի² ի սրբոյ Երրորդութենեդ ծնար ի սուրբ կուսէն Մարիամայ, եւ զամենայն կարիս բարձեալ բոյին մարմնովդ, զոր ի սուրբ եւ յաստուածածին կուսէն առեր՝ տարեալ բեւեռեցեր ի խաչին փայտի³. յորում հեղեալ զսուրբ արիւնդ քո՝ ազատեցեր զաշխարիս ի ծառայութենէ մեղաց անիծից. մեռար, թաղեցար եւ յարեար, եւ վերացեալ յերկինս՝ ետուր անտիս խոստման՝ տանել առ քեզ զամենեսեան, որ խոստովանին առ քեզ, Աստուած ճշմարիտ, թագաւոր թագաւորաց եւ տէր տէրանց: 8 Եւ մէք վկայեմք եւ խոստովանիմք զքեզ Աստուած աստուծոց եւ տէր տէրանց, Աստուած քաւիչ մեղաց մերոց. ուրացեալքս՝ եւ զղջացեալքս, յանցուցեալքս՝ եւ յողորմութիւնդ ապաւինեալքս, զլորեալքս՝ եւ կանգնեալքս: 9 Ընկալ զմեզ որպէս զորդին ուրացող, որ⁴ ծախեալ աղտեղեցաք զհանդերձ սուրբ մկրտութեանն, զոր զգեցուցեր մեզ աւագանին լուացմամբ, անառակ անաւրէնութեամբ թաւալեցաք ի տղմի ուրացութեանց իբրեւ զդասակսն խոզաց:

10 Եւ արդ՝ դարձեալ առ ճշմարիտ Յայրդ երկնաւոր աղաղակեմք ասելով. Մեղաք յերկինս եւ առաջի քո^ա. շնորհեա՛ մեզ բարեխաւսութեամբ լուսաւորիչ առաքելոցն եւ վաստակովք սուրբ⁵ Նահատակին Գրիգորի Նոցին Նմանոյն եւ զործակցի՝ զթողութիւն մեղաց մերոց. եւ զգեցո՛ մեզ զառաջին պատմութեանն եւ մաքրեա զոտս զմեր ի խոչիցն չարեաց, որով ծակոտեալ թշնամւոյն⁶ կաղացոյց զմեզ: 11 Եւ ագո՛⁷ մեզ կաւշիկս պահպանութեան՝ Ա-

1 Ձ. զսուրբ հոգիս

2 Ձ. չիք մի

3 ՏՏ. ի խաչափայտի

4 Ձ. չիք որ

ա Ղուկ. ԺԵ 21

5 ՁԱտ. առաքելոցն վաստակովք եւ սուրբ

6 ՏՏ. ի թշնամւոյն

7 Ձ. ագոյ